

ԼԵԶԿԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
Ս. ԽԱՆՁԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ

Գեղարվեստական ոճի ամենակարևոր առանձնահատկություններից մեկը նրա պատկերավորությունն է: Գեղարվեստական խոսքը պատկերավոր մտածողության արտահայտություն է, որը դրսևորվում է պատկերավորման միջոցների /փոխաբերություն, չափազանցություն, համեմատություն, մակդիր ևն/ և բառը փոխաբերական նշանակությամբ գործածելու միջոցով: Մեր նպատակն է ուսումնասիրել ժամանակակից հայ պատմավիպասանության նշանավոր դեմքերից մեկի՝ Սերո Խանգադյանի պատմավեպերի պատկերավորման միջոցները: Խանգադյանի պատմավեպերում / ՄՍ - «Մխիթար Սպարապետ», Շ- «Շուշի», ԽՉԼ - «Խոսեք, Հայաստանի լեռներ»/ պատկերավորման բոլոր միջոցներն էլ չափազանց լայն գործածություն ունեն: Անդրադառնալով դրանց առանձին-առանձին:

Համեմատությունն աշխարհի ճանաչողության հիմնական միջոցներից մեկն է: Այն օգնում է երևույթների մասին իրական ու ճշմարիտ պատկերացում կազմել: Ինչպես նշում է Լ. Եզեկյանը¹, համեմատությունն այն հնարանքն է, երբ որևէ առարկայի, երևույթի նկարագիրը ավելի պարզ, տպավորիչ դարձնելու նպատակով այն համադրվում է այդ առարկայի արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով /տվյալ պահին կամ ընդհանրապես/ նման առարկայի կամ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և բացահայտում է նկարագրվող առարկայի էությունը:

Կառուցվածքային տեսակետից համեմատությունները կարող են կառուցվել մեկ կամ մեկից ավելի հատկանիշների հիման վրա: Մեկ հատկանիշի հիման վրա կառուցված համեմատության դեպքում համեմատելի առարկան երկրորդի հետ կապվում է պես, նման և այլ կապերով: Տվյալ դեպքում համեմատության կողմերը պարզ են. կա'մ իրար նման են, կա'մ՝ հակադիր:

¹ Տես Լ. Եզեկյան, Բաժնու ստեղծագործությունների լեզուն և ոճը, եր., 1975, էջ 158:

Այսպիսի համեմատությունները իրենց ներքին բովանդակությամբ համադրություն են, կառուցված են նմանողական սկզբունքով: Այս տեսակի համեմատությունները ամենամեծ թիվն են կազմում Ս. Խանգադյանի պատմավեպերում: Այսպես՝

«Նա զգաց, որ ինքը մենակ է քամու բերնին քշվող տերևի պես» /ԽՀԼ, 95/: «Պահապանը թարտաց, ապա խաղաղվեց, ինչպես մուկը կատվի ճիրաններում» /ԽՀԼ, 110/:

Սեկից ավելի հատկանիշների հիման վրա կառուցված համեմատությունների մեջ հանդես եկող համեմատելի կողմերը իրար նկատմամբ համադիր են, իրար նման են, սակայն յուրաքանչյուր կողմը իր ներսում հակադրություն է ներկայացնում: Այդպիսի համեմատություններ կազմելու գործառությամբ են հանդես գալիս մի քանի կապեր /պես, նման, իբրև, որպես, ինչպես/, եղանակավոր բառեր ու կապապցություններ /կարծես, ասես, կարծես թե, ոնց որ /, դերանուններ / այնպես, ինչպես/, որոշ բայեր, ստորոգումը: Այսպես՝

«Բավական է, որ Մխիթարը մի հոնքը շարժի, ու այս սև ամբոխը կիռշոտի իրեն, կզգի, ինչպես սոված գայլերն են զգում ոչխարին» /ՍՍ, 53/:

Այս նախադասության մեջ հակադրությունն ստեղծված է մի կողմից՝ գայլի ու ոչխարների միջև եղած հարաբերությամբ, մյուս կողմից՝ Մխիթարի և սև ամբոխի հարաբերությամբ: Ահա բարդ համեմատության օրինակ՝

«Քաղցից գալարվող քաղաքը նիւհում էր ամբողջ օրը որս չճանկած վագրի նման գլուխը թաթերին, աչքերը կիսաբաց, մրսող ու կատաղի» /ՍՍ, 256/:

Համեմատությունների եզրեր կարող են դառնալ ինչպես կյանքի միևնույն, այնպես էլ տարբեր ոլորտների իրերն ու երևույթները, անձն ու կենդանին, ըստ որում՝ իրը՝ մի այլ իրի, իրը՝ կենդանու, կենդանին՝ կենդանու հետ են: Այսպես՝ ա/ երկու տարբեր ոլորտների իրեր՝

«Նրա դեղին աչքերը մթնեցին, ուր որ է կպայթեն՝ կրակի մեջ ընկած շագանակի պես» /ԽՀԼ, 218 /:

բ/իրը կենդանու հետ՝

Գիշերը մռնչում էր՝ մռուքը հով ընկած ցուլի մոլեգնությամբ» /ԽՀԼ, 210/:

գ/ անձը անձի հետ՝

«Գլուխը բռնելով՝ հեկեկում եր մոր կողմից անտեղի վիրավորանք ստացած դեռատի աղջկա պես» /ՄՍ,485/:

դ/ անծը կենդանու հետ՝

«Թամազն անգոր եր ատամները թափած առյուծի պես» /ՄՍ,260/:

«Սիա դու արդեն գրավչության կրակ ես, ինչպես աշնանը արոտից տուն դարձող երինջը , գեղեցիկ իմ Սոնա, անտառում մոլորված կխտար» /Ը,22/:

ե/ անծը իրի հետ՝

«Նա զգաց, որ ինքը մենակ է քամու բերնին քշվող տերևի պես» /ԽՅԼ,145/:

զ/անծի հատկանիշը իրի հետ՝

«Շուխ Իլդիգի մեջքը եղեգ է՝ եփրատի կապույտ ջրերից ելած, համբույրը՝ հովի հայում շոգից խանձված շրթունքներին» /ԽՅԼ,47/:

է/ անծը կամ իրը դիցաբանական էակների հետ՝

«Ապա մատները կպան սառած մարմարի. աղջկա մերկ ուսերն էին՝ աստվածամոր կործանված արծան» /ԽՅԼ,281/:

Բերված և բազմաթիվ այլ համեմատությունների օգնությամբ Ս. Խան-զադյանը բացահայտում, ի հայտ է բերում հերոսների հոգեկան աշխարհը՝ նրանց հոգեվիճակը, կամ կերպարներից որևէ մեկի բնավորության գծերը, նրա էությունը: Սիա Մխիթար Սպարապետի և Գոհարի /«Մխիթար Սպարապետ»/ հոգեկան անմխիթար և անտանելի վիճակը, երբ պետության շահերից ելնելով՝ Մխիթարը իր սիրած կնոջը ամուսնացնում է ուրիշի հետ: Այսպես՝

«— Աստծո և իմ ու քո հոր կամքով դու պետք է ամուսնանաս Թովմա հարյուրապետի հետ, Գոհա՛ր»:

Ասաց ոչ իր, բոլորովին օտարի ծայնով, որ դաժան ու ծանր էր, ինչպես գերեզմանի մեջ զցած առաջին քարի խուլ դղիրդը: Գոհարը գունատվեց դանդաղ, ինչպես երկինքը լուսաբացին: Նրա այտերի կարմրությունը հալվեց ջրի մեջ ընկած գինու կաթիլի պես, և մնաց մի դալուկ ճերմակություն» /ՄՍ,91/:

Կամ մեկ այլ համեմատության մեջ գրողը ցույց է տալիս Քեմալ բեյի անեղանելի վիճակը.

«Քեմալ բեյը չթողեց, որ նա շարունակի, թափով ճեղքեց մունդիրի օձիքը և սկսեց խոխոխալ: Օդ չկար, խեղդվում էր ջուրն ընկածի պես: Բեյի ձեռքերը

կարծես կտրվեցին: Նրա դեղին աչքերը, որ լիքն էին արյամբ, կլորացան, մթնեցին, ուր որ է կայաթեմե՝ կրակի մեջ գցած շագանակի պես» /ԽՅԼ, 218-219/:

«Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպում Ներսես Հաուշի հոգեկան վիճակը /Աղավնուն կորցնելուց հետո/ գրողը ցույց է տալիս այսպիսի համեմատությամբ.

«Սակայն մա իր վիշտը կարողանում էր խեղդել, ցույց չտալ ոչ ոքի, թեև արյունը պղտորվում էր, թույն դառնում երակների մեջ, թեև մղվում էր վայրագության: Աշնան տափակ հորիզոնները /մրա համար/ մահատեսիլ էին՝ Աղավնու գերեզմանի բաց երախի պես» /ԽՅԼ, 452/:

Ս. Խանգաղյանի պատմավեպերում բնությունը՝ հայրենի բնաշխարհն էլ է ողբում իր զավակների համար, երբեմն երևույթների հետ համեմատության միջոցով է գրողը ցույց տալիս հայ ժողովրդի դառը ճակատագիրը, հերոսների հոգեվիճակը: Այդպիսի համեմատությունների բազմաթիվ օրինակներ կան պատմավեպերում: Այսպես՝ «Լուսնի պռունկը դուրս էր եկել Գյառնո լեռներից ու արյունոտ մանգաղի պես կախվել կապույտ մշուշի տակ, ժայռերի վրա թառած երևանի գլխին» /ՄՍ, 387/:

Համեմատությունները մեծ դեր են կատարում մահ անկրկնելի բնապատկերների ստեղծման գործում: Ահա գրողը ստեղծել է Եփրատի բնապատկերը.

«Լեռը աշնանային լերկ էր, ձվածիր դաշտը՝ դեղին մահիճ՝ մեջը ծավալ-ծավալ Եփրատը, հայոց աշխարհի գետերի սուրբը՝ կապույտ առասպել, կապույտ ստնտու՝ ալեհեր պատմության նշխարներով» /ԽՅԼ, 4/:

«Մխիթար Սպարապետ» վեպում գրողը ստեղծել է հետևյալ բնապատկերը. «Գետի մյուս կողմում կաղնու անտառն էր՝ մուգ, թանձր գույներով: Անտառն սկսվում էր լեռնագագաթի ծյուների տակից ու անփութորեն իջ-նելով՝ խառնվում գետի փրփուրներին: Գետի այս ափին վայրի խնձորենիների մի մեծ զանգված էր գանգուրված: Համատարած զմրուխտ կանաչի մեջ գետը նման էր մեկի կողմից մոռացած արծաթ գոտու» /ՄՍ, 107/:

Լեզվի պատկերավորման միջոցներից ամենատարածվածը փոխաբերությունն է, երբ որևէ բանը կամ արտահայտությունը գործ է ածվում այնպիսի առարկաների, երևույթների կամ հատկանիշների վերաբերությամբ, որոնք չեն մտնում նրանց ուղղակի իմաստի մեջ, այլ հենվում են առարկաների,

երևույթների, կամ նրանց որոշ չափով նաև ներքին նմանության վրա² :

Փոխաբերությունները լինում են լեզվական և բառային: Լեզվական փոխաբերությունները արդեն իսկ փոխաբերություն են լեզվում, այսինքն՝ բառերն ու կապակցությունները լեզվում ճանաչվում են իրենց փոխաբերական իմաստներով:

Ինչպես նկատում է Պ. Պողոսյանը,³ խոսքային փոխաբերությունների առաջացման հիմնական ուղին բառի անցումն է սեփական իմաստային ոլորտից այլ ոլորտի: Այդ անցումները կատարվում են հետևյալ կերպ.

ա/ անշունչ առարկայի հատկանիշը վերագրվում է այլ առարկայի: Օրինակ՝ «Սրբազանի մորուքն ալեկոծվեց» /ԽՂԼ,69/:

Այս տիպի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել մեր ուսումնասիրած պատմավեպերից:

բ/ Ս. Խանգադյանի պատմավեպերում փոխաբերության ամենատարածված տեսակներից մեկը անձնավորումն է, երբ անշունչ առարկաներին և կենդանիներին վերագրվում են մարդկային հատկանիշներ: Այսպես՝ «Ավազը խենթացավ, ելավ, մրրկեց, քարափներն աղաղակեցին» /ԽՂԼ,393/:

Խանգադյանի պատմավեպերում պատկերված է հայ ժողովրդի քաղաքական ծանր վիճակը, նրա պայքարը օտար նվաճողների դեմ, 1915 թվականի եղեռնը: Բնությունը, հայկական բնաշխարհը չէր կարող անտարբեր լինել իր իսկ ժողովրդի ճակատագրի հանդեպ. բնությունն ինքն էլ է ողբում իր զավակների ողբերգության համար, նրանց բաժին հասած դաժան ճակատագրի համար: Այսպես՝ «Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպում, երբ արդեն զգացվում էր, որ թուրքերը պատրաստվում էին զանգվածային կոտորածների, Խանգադյանը օգտագործում է հետևյալ փոխաբերությունները՝

«Ահ ունի հայոց մեծ գետը, քող է քաշել վրան» /ԽՂԼ,127/:

«Եփրատի ջրերը հրդեհվեցին» /ԽՂԼ,17/:

² Տես Լ.Եզեկյան, Գր. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Եր., 1986, էջ 72:

³ Տես Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ. 2-րդ, Եր.1991, էջ 35:

«Կոտորվում, սրախողխող էր արվում մի ամբողջ ժողովուրդ, երզնկա քաղաքը դիակի էր նմանվել, իսկ երկինքն անտարբեր էր.

Երզնկան դիակի պես աչքերը չռել, ոռնում էր գորշ երկնքի երախին» /ԽՉԼ, 184/:

Աշխարհին անտարբեր էր մի ողջ ժողովրդի ողբերգության հանդեպ, և գրողը դիմում է հայոց լեռներին՝ «Խոսեք, Հայաստանի լեռներ»:

Երբեմն Ս. Խանգադյանի վեպերում փոխաբերությունն արտահայտիչ է դառնում չափազանցումների միջոցով: Այսպես՝ «Երզնկա քաղաքում կոտորած հրահրող փաշան չի կարողանում նայել սուրբ Նշան եկեղեցու խաչին: Վիպասանը գրում է. Երզնկայի սուրբ Նշան եկեղեցու՝ արևից կրակված խաչի բոցը խայթեց նրա բիբը» /ԽՉԼ, 3/:

«Մխիթար Սպարապետ» վեպում, որպեսզի ցույց տա Երևան քաղաքը պաշարած թուրքական բանակի քանակը, գրողն օգտագործում է հետևյալ չափազանցությունը. «Օսմանյան բանակի անհամար ցուլքից երկինքն արյան գույն ստացավ, աստղերն աղոտացան» /ՄՍ, 461/:

Ինչպես արդեն նշել ենք, պատկերավորման միջոցներից մեկն էլ մակդիրն է: Մակդիրն առարկան կամ երևույթը գեղագիտորեն բնութագրող որոշիչն է, այսինքն գեղարվեստական որոշիչն է: Այս առումով այն տարբերվում է սովորական քերականական որոշիչից: Ածական որոշիչները ցույց են տալիս առարկայի կամ երևույթի սովորական, կայուն հատկանիշներ և ունեն տարբերակող ճանաչողական նշանակություն, հատուկ են բոլոր ոճերին, ուստի ոճականորեն չեզոք են, մինչդեռ մակդիրը պատկերավոր փոխաբերական իմաստ ունի և առարկայի կամ երևույթի ոչ սովորական բնորոշումն է: Ինչպես նաև նրա մեջ մենք տեսնում ենք հեղինակի անհատական վերաբերմունքը՝ կախված միջավայրից, իրավիճակից, հերոսի հոգեբանությունից ևն:

Խանգադյանի պատմավեպերում գործածված մակդիրները կարելի է բաժանել երեք խմբի՝

1/ մեկ բառով արտահայտված

2/ բաղադրյալ՝ մասնավորապես հարադրություններով արտահայտված

3/ բառակապակցություններով արտահայտված

Առաջին խմբի մակդիրները կարող են արտահայտվել ածականով, դերբայով, ինչպես նաև գոյականով: Խանգադյանի պատմավեպերում բավական մեծ թիվ են կազմում ածականով արտահայտված մակդիրները: Այսպես՝ «Դե, ո՞ւմ է հարկավոր նման արյունոտ մանկությունը» /ԽՉԼ, 473/:

Ինչպես նաև՝ տաք հաճույք, վտիտ ցերեկ, արյունոտ մրմունջ, խելագար գիշեր, վիրավոր լույս, սառցեղեն ցավ, արյունոտ երգ են:

Պատմավեպերում հատկապես շատ են հարակատար և ենթակայական դերբայներով արտահայտված մակդիրները: Այսպես օրինակ՝ «Արևն էլ կարծես այդ սառցեղեն անտարբերության մեռած խիղճն է» /ԽՉԼ, 153/:

Նաև՝ խավարած աստղ, լողացած, մաքրված արև, հոտած աշխարհ, մշուշված երազ, սառած տառապանք, արյունոտված հույս են:

Եվ չնայած ածականն է հիմնականում դառնում մակդիր, սակայն առավել ուժեղ բնութագրող մակդիր են դառնում գոյականները: Այդ այն պատճառով, ինչպես նշում է Պ. Պողոսյանը,⁴ որ եթե ածականը կամ բայը մեկ հատկանիշով է բնութագրում առարկան, ապա գոյականը՝ հատկանիշների մի ամբողջ խմբով: Այսպես օրինակ՝ «Այս հուղա գիշերին ինչպե՞ս եկաք» /ՄՍ, 229/: Ինչպես նաև՝ կուպր խավար, ցուրտ շունչ, բուրգ գլխարկ, գունդ մարմին, շշուկով քամի, ծերունի Մասիս են:

Երկրորդ խմբի մեջ են մտնում բարդ բառերով՝ մասնավորապես հարադրություններով արտահայտված մակդիրները: Դրանք հիմնականում անվանական կրկնավոր բարդություններ են կամ զուգադրական բայեր: Օրինակ՝ «Փունջ - փունջ աստղերով առլեցուն երկինք էր» /ԽՉԼ, 314/ :

Նաև՝ վետ - վետ բույր, բլուր - բլուր ծյուն, կապույտ - ճերմակ անսահմանություն, գլուխ պայթեցնող աղմուկ, այրված փոթորկված մարդիկ են:

Երրորդ խմբի մեջ են մտնում ծավալուն դերբայական դարձվածով և ամենատարբեր բառակապակցություններով արտահայտված մակդիրները: Ս. Խանգադյանի պատմավեպերում դրանք նույնպես մեծ թիվ են կազմում, և հատկապես շատ են ետադաս ծավալուն բառակապակցությունները: Այսպես.

⁴ Տես Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 45:

«Թիկունքներին անմատչելի ժայռն է, թուրքը՝ տաք մարմին հոշոտելու հաճույքով արբած»/ԽՅԼ, 268/:

Նաև՝ պառավներ՝ կանաչ կարիճ աչքերով, հայոց բախտի նորածագ աստղ, անտառ՝ անգութ ատամներով, սառը ժպիտ՝ ագռավի ոտնահետք ծյան վրա են:

Գեղարվեստական խոսքում գրողները հաճախ են դիմում այսպես կոչված գունային մակդիրներին: Ս. Խանզադյանի պատմավեպերում ամեն մի գույն իր իմաստն ունի, իր ուրույն աշխարհը: Այսպես՝ կապույտը երազ է, անուրջ, հանգստություն, մաքրություն, ցնորք, մոռացություն, նույնիսկ անցավ մահ:

«Հիմա դու գնա դեպի կապույտ ծովի կապույտ գիշերն ու կապույտ երգերը» /ԽՅԼ, 270/:

Ժողովրդի ցավը, վիշտը, տառապանքներն են արտահայտում սևը, գորշը, կանաչը, դեղինը, ճերմակը, սպիտակը: Այսպես՝ «Մահվան սարսափը կանաչ թույն էր դարձել նրանց բիրբերի տակ» /ԽՅԼ, 150/:

Նաև՝ կանաչ հայացք, ճերմակ դիակ, գորշ մշուշ, սև լուր, սև բոթ, սև համբավ են:

Գրողի պատմավեպերում կան նաև մակդիրներ, որոնք տալիս են առարկայի, երևույթի քանակական բնորոշումը: Օրինակ՝ փունջ-փունջ աստղեր, բլուր-բլուր ծյուն, շերտ - շերտ ճերմակ, գունդ-գունդ թուրքեր, բռունցք - բռունցք ժայռեր են:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, Ս. Խանզադյանի պատմավեպերում գործածված պատկերավորման բոլոր միջոցներն էլ ինքնատիպ են և համահունչ թեմային, հերոսների հոգեվիճակին, գործածվում են տեղին, և հեղինակի լեզվի պատկերային համակարգում դրանց գեղագիտական-արտահայտչական արժեքն անփոխարինելի է: